,, Ինչպէս պէտք է փրկել վանքերը կործանումից, որովհետեւ նրանք անհրաժեշտ նեցուկ են Հայ եկեղեցու։

,, Ո՞ւր են ուսումնասիրում մեր վարդապետցուք Ս. Գիրքը, ուրէ մշակւում Հայ եկեղեցական գիտութիւնը։ (Լեզուն և կրօնը)։

,, Ո՞ւր են պատրաստւում հայ ժողովրդի համար քարոզիչ վարդապետները. ուր են Հայ ժառանգաւորները։[1])

Ազգիս Վեհափառ Հայրապետը գիտէ մեր վանքերի այս վիճակը և անշուշտ անմոռանալի յիշատակ կը թողնէ ապագային՝ վերականգնեցնելով վանքերը իւր ժառանգաւորներով,,։ Աստուած տայ և յաջողէ։

1887 թուին դեկտեմբեր ամսին մեծ ուրախութեամբ ըստացայ Բագուի մեր գործակալից լուր աւետման թէ Բագուաբընակ եղբարք Բուդաղեանք յարգոյ Մովսէս, Եղիա, և Ենովք և եղբոր որդիք Սմբատ և Երուանդ պատրաստ են 'ի յիշատակ եղբօր և հօր Իւրեանց հանդուցեալ Թադէոս Աւագ քահանայի՝ տասն հազար ռուբլի գրամագլխով ապահովել Սաղիանի վանական դպրոցի գոյութիւնը։

Այս լսելով՝ իսկոյն դեկտեմբերի 2ին 1887 թիւ համար 201. գրութեամբս հրաւիրեցի Բուդաղեան եղբարց՝ գրով յայտնել ինձ Իւրեանց բարի ցանկութիւնն և ուղարկել գրաւոր խոստումն։ Գրութիւնս հետեւեալ բովանդակութեամբն էր։

,, Հոգեհարազատ որդիք եկեղեցւոյ և ընտիր Անդամք Հայութեան Պ. Պ. Մովսէս, Եղիա, Ենովք, Սմբատ և Երուանդ Բուդաղեանց. Քրիստոսական ողջունիւ և օրհնութեամբ յայտնեմ. թէ հաւատի աղբիւրներից տեղեկացած եմ Ձեր արժանայիշատակ Հօր Թադէոս աւագ քահանայի առաքինական բարեմասնութեանց մասին, որ ինչպէս մի լուսաւոր աստղ փայլել Ղամախու թեմի հոգեւորականութեան մէջ իւր արժանաւոր գործերովը։

[1]) Այս հարցմանց պատասխաններն թող տան, որք ազգի առատ գումարները վայելում են հանգստութեամբ...